# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Այ-Սոլուշն ՍՊԸ-ն ԵԲԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/78 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 5 | - | - | - | - | Լրակազմը պետք է պարունակի հետևյալ մեկանգամյա օգտագործման լապարոսկոպիկ վիրաբուժական գործիքներն ու տրոկարները` 1. Monopolar Curved Scissors / Մոնոպոլյար կոր մկրատ` բարձր ջերմամեկուսացմամբ – 1 հատ 2. Monopolar Curved Maryland Dissecting Forceps / Մոնոպոլյար կոր «Մերիլենդ» դիսեկցիոն աքցան – 1 հատ 3. Monopolar Fenestrated Johan Grasping Forceps, with Ratchet / Մոնոպոլյար ֆենեստրացված «Յոհան» տիպի բռնող աքցան` ռաչետային (ֆիքսացիոն) |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | մեխանիզմով – 1 հատ 4. Bipolar Coagulation Forceps (Maryland) / Բիպոլյար կոագուլյացիոն աքցան՝ «Մերիլենդ» տիպի – 1 հատ 5. Disposable Bladeless Trocar with Convertible Diameter / Մեկանգամյա օգտագործման անսայր տրոկար՝ տրամագծի ձևափոխման հնարավորությամբ – 2 հատ 6. Disposable Endobag / Մեկանգամյա օգտագործման նմուշահանման պարկ (պարզ տիպի), 400 մլ – 20 հատ 1. Մոնոպոլյար կոր մկրատ՝ բարձր ջերմամեկուսացմամբ (Monopolar Curved Scissors)Մեկանգամյա օգտագործման մոնոպոլյար կոր մկրատ՝ բարձր ջերմամեկուսացմամբ, նախատեսված լապարոսկոպիկ և ընդհանուր վիրաբուժական միջամտությունների ընթացքում հյուսվածքների կտրման և մոնոպոլյար էլեկտրակոագուլյացիայի իրականացման համար։ Արտաքին տրամագիծը՝ 5 մմ, աշխատանքային երկարությունը՝ 330 մմ, շեղբի երկարությունը՝ 10 մմ։ Համատեղելի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | լինի ստանդարտ 5 մմ լապարոսկոպիկ տրոկարների հետ: Պատրաստված լինի բարձր ամրության, կոռոզիակայուն բժշկական չժանգոտվող պողպատից: Ունենա բարձր ջերմամեկուսացում՝ հարակից հյուսվածքների անցանկալի ջերմային վնասումը նվազեցնելու նպատակով, ատրավմատիկ, ճշգրիտ մշակված կոր ծայրեր, էրգոնոմիկ, չսահող բռնակ և 360° պտտվող աշխատանքային մաս: Ստերիլ, մեկանգամյա օգտագործման: 2. Մոնոպոլյար կոր «Մերիլենդ» դիսեկցիոն աքցան (Monopolar Curved Maryland Dissecting Forceps)Մեկանգամյա օգտագործման մոնոպոլյար կոր «Մերիլենդ» դիսեկցիոն աքցան՝ նախատեսված լապարոսկոպիկ և ընդհանուր վիրաբուժական միջամտությունների ընթացքում հյուսվածքների նուրբ դիսեկցիայի, բռնման և մոնոպոլյար էլեկտրակոագուլյացիայի իրականացման համար: Արտաքին տրամագիծը՝ 5 մմ, աշխատանքային երկարությունը՝ 330 մմ: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Համատեղելի լինի ստանդարտ 5 մմ լապարոսկոպիկ տրոկարների հետ: Ունենա կոր «Մերիլենդ» տիպի ատրավմատիկ, ճշգրիտ մշակված աշխատանքային ծայր, բարձր ջերմամեկուսացում՝ հարակից հյուսվածքների անցանկալի ջերմային վնասումը նվազեցնելու նպատակով, 360° պտտվող աշխատանքային մաս և էրգոնոմիկ, չսահող բռնակ: Պատրաստված լինի բարձր ամրության, կոռոզիակայուն բժշկական չժանգոտվող պողպատից: Ստերիլ, մեկանգամյա օգտագործման: 3. Մոնոպոլյար ֆենեստրացված «Յոհան» տիպի բռնող աքցան՝ ռաչետային (ֆիքսացիոն) մեխանիզմով (Monopolar Fenestrated Johan Grasping Forceps)Մեկանգամյա օգտագործման մոնոպոլյար ֆենեստրացված «Յոհան» տիպի բռնող աքցան՝ ռաչետային (ֆիքսացիոն) մեխանիզմով, նախատեսված լապարոսկոպիկ և ընդհանուր վիրաբուժական միջամտությունների ընթացքում հյուսվածքների նուրբ բռնման, ֆիքսման, մանիպուլյացիայի և |

## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Ай-Солюшн в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵԲԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/78 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 5 | | | | | մոնոպոլյար էլեկտրակոագուլյացիայի իրականացման համար: Ծնոտի երկարությունը` 22 մմ, արտաքին տրամագիծը` 5 մմ, աշխատանքային երկարությունը` 330 մմ: Համատեղելի լինի ստանդարտ 5 մմ լապարոսկոպիկ տրոկարների և մոնոպոլյար էլեկտրավիրաբուժական գեներատորների հետ: Ունենա ֆենեստրացված «Յոհան» տիպի ատրավմատիկ ծնոտներ, ռաչետային (ֆիքսացիոն) մեխանիզմ, բարձր ջերմամեկուսացում` հարակից հյուսվածքների անցանկալի ջերմային վնասումը նվազեցնելու նպատակով, 360° պտտվող աշխատանքային մաս և էրգոնոմիկ, չսահող բռնակ: Պատրաստված լինի բարձր ամրության, կոռոզիակայուն բժշկական չժանգոտվող պողպատից: Ստերիլ, մեկանգամյա օգտագործման: 4. Բիպոլյար կոագուլյացիոն աքցան` «Մերիլենդ» տիպի (Bipolar Coagulation Forceps, Maryland)Մեկանգամյա օգտագործման բիպոլյար |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | կոագուլյացիոն աքցան՝ «Մերիլենդ» տիպի, նախատեսված լապարոսկոպիկ և ընդհանուր վիրաբուժական միջամտությունների ընթացքում հյուսվածքների նուրբ դիսեկցիայի, բռնման և բիպոլյար կոագուլյացիայի իրականացման համար։ Արտաքին տրամագիծը՝ 5 մմ, աշխատանքային երկարությունը՝ 330 մմ։ Համատեղելի լինի ստանդարտ 5 մմ լապարոսկոպիկ տրոկարների հետ։ Ունենա կոր «Մերիլենդ» տիպի ատրավմատիկ ծնոտներ, բիպոլյար էներգիայի ճշգրիտ փոխանցման համակարգ, 360° պտտվող աշխատանքային մաս և էրգոնոմիկ, չսահող B-աձև բռնակ։ Պատրաստված լինի բարձր ամրության, կոռոզիակայուն բժշկական չժանգոտվող պողպատից։ Ստերիլ, մեկանգամյա օգտագործման։ 5. Մեկանգամյա օգտագործման անսայր տրոկար՝ տրամագծի ձևափոխման հնարավորությամբ (Disposable Bladeless Trocar with Convertible Diameter)Մեկանգամյա օգտագործման անսայր տրոկար՝ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | տրամագծի ձևափոխման հնարավորությամբ, նախատեսված լապարոսկոպիկ և ընդհանուր վիրաբուժական միջամտությունների ընթացքում որովայնի խոռոչ անվտանգ մուտք ապահովելու և էնդոսկոպիկ գործիքների ներմուծման համար։ Արտաքին տրամագիծը՝ 15 մմ, 12 մմ աշխատանքային տրամագծի ձևափոխման հնարավորությամբ։ Համատեղելի լինի ստանդարտ 15 մմ և 12 մմ լապարոսկոպիկ գործիքների հետ։ Ունենա անսայր (ատրավմատիկ) օբտուրատոր՝ հյուսվածքների շերտերի նուրբ տարանջատումն ապահովելու նպատակով, ունիվերսալ փականային համակարգ՝ 15 մմ աշխատանքային տրամագիծը 12 մմ-ի ձևափոխելու հնարավորությամբ՝ գազի հերմետիկության պահպանմամբ։ Կանյուլան պատրաստված լինի բարձր ամրության, թափանցիկ բժշկական պոլիմերից, ունենա հակասահքային ֆիքսող մակերես և էրգոնոմիկ բռնակ։ Ստերիլ, լատեքսազուրկ, մեկանգամյա օգտագործման։ 6. |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Մեկանգամյա օգտագործման նմուշահանման պարկ (պարզ տիպի), 400 մլ (Disposable Endobag)Մեկանգամյա օգտագործման նմուշահանման պարկ (պարզ տիպի), 400 մլ՝ նախատեսված լապարոսկոպիկ և այլ նվազագույն ինվազիվ վիրահատությունների ընթացքում հեռացվող հյուսվածքների և կենսաբանական նմուշների անվտանգ հավաքման և դուրսբերման համար։ Տարողունակությունը՝ 400 մլ։ Պատրաստված լինի բարձր ամրության, կենսահամատեղելի, պատռման և հեղուկների արտահոսքի նկատմամբ դիմացկուն պոլիմերային նյութից։ Ապահովի նմուշի անվտանգ տեղադրում, հուսալի փակման և դուրսբերման հնարավորություն։ Համատեղելի լինի համապատասխան տրամագծի լապարոսկոպիկ տրոկարների հետ։ Ստերիլ, մեկանգամյա օգտագործման։Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, առանձին գործարանային ստերիլ փաթեթավորմամբ։Մատակարարը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | պարտավոր է ներկայացնել՝ Արտադրող ընկերության կողմից տրված ավտորիզացիոն նամակ,Արտադրանքի CE, FDA կամ համարժեք որակի և համապատասխանության հավաստագրեր։ |